ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի գլխավոր խորհրդատուն՝

1) Ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.

2) Իրականացնում է Բաժնի կանոնադրությամբ նախատեսված առանձնակի տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողություններ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի և ոլորտը կարգավորող այլ օրենքներին համապատասխան.

3) Բաժնի կանոնադրությամբ նախատեսված կատարողական գործողությունների կատարման ընթացքում իր իրավասության սահմաններում կայացնում է որոշումներ.

4) Կազմակերպում է Բաժնում կարճված և ավարտված կատարողական վարույթների արխիվացման գործընթացը.

5) Պատասխանում է Բաժին ներկայացված դիմում-բողոքներին.

6) Կատարողական վարույթի կողմերին քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության իրավաբանական բաժնի հետ:

7) Հարկադիր կատարման ծառայությունում առաջին անգամ պաշտոն զբաղեցնող անձանց Ծառայության գործառույթներին ծանոթացնելու նպատակով նշանակվում է որպես փորձաշրջանի համակարգող.

8) Իրականացնում է Ոստիկանության հետ համագործակցությամբ համատեղ շրջայցերի և այլ միջոցառումների կատարման ապահովումը.

9) Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Հատկապես կարևոր վարույթների և օպերատիվ բաժնի գլխավոր խորհրդատուի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: